

**ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱ՛ՌՔ
ԽԱՂԱՂՈՒԹԻ՛ՒՆ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ
ՄԱՐԳՈՅ ՄԻՋԵՒ ՀԱՃՈՒԹԻՒՆ
Ս. ՄԱՐԳԵՂՈՒԹԻՒՆԸ ՄԻԱԾՆԻՆ**

***G**lory to God in the Highest*

**ԱՊԷԹ ԿՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
2002**

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն

«Աջխարհի ստեղծագործությունն անաչ գոյութիւն ունէր

Բանը: Բանը Աստուծոյ հետ էր և Բանը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ հետ էր: Անով էր որ Աստուած աճէն ինչ ստեղծեց, առանց անոր ո՛չ մէկ բան ստեղծեց: Կեանքը անով սկիզբ առաւ: Եւ կեանքը մարդոց համար լոյսն է՝ որ խաւարին մէջ կը փայլի, բայց խաւարը չկրցաւ հասկնալ զայն» --Յով. Ա. 1-5:

Մարդկային միտքը կ'ուզէ բացարձակին հանդիպիլ ու հասնիլ Անվիճելիին և Կատարելին: Մարդ կ'ուզէ գիտնալ տիեզերքի սկիզբը, իր գոյութեան սկզբնաւորութիւնը և սոյն սկզբնաւորութեան վախճանը: Մարդ եակը ինչո՞ւ կ'ուզէ հասնիլ և ըմբռնել Բացարձակը: Որովհետեւ Բացարձակը մարդ արարածին լրացուցիչն ու Բարկացուցիչն է: Միակ անպատեհութիւնը և ողբերգութիւնը ա՛յն է, որ մարդ կը կարծէ թէ, ի՛նք իր բաղադրիչ տարրէն աւելի մեծ է...: Մարդ երբ կը կարծէ թէ գտած է այդ փնտռուած սկիզբը, ինքզինք կը գտնէ անսահման, վիթխարի, անչափելի ու անհասանելի գահավէժի մը առջեւ:

Այս սարսազդեցիկ խորխորատը չափելու և հասկնալու համար իմաստասէրներ ու խորհողներ, մէջն ըլլալով Սօրէն Զիրքըկաար և Մարթին Պիւպրո, ճշմարտութիւնը վերածեցին ենթակայական ու յարաբերական: Մեծ իմաստասէր առաքեալը Սուրբ Պօղոս՝ իրաւամբ ըսած է. *«Ճատէն քիչը գիտենեմ ու ջատէն քիչը կը մարգարէանանեմ»*: Մարդ առանց Գերբնականին կը պարպուի, կ'անջգանայ և կ'իմաստազրկուի:

Ուստի կ'ուզեմ յետագայ համեստ բացատրականովս ընկերանալ Մարդեղացեալ Յիսուսի, և Անոր Սուրբ Աւետարանին ընդմէջէն և Հոգիին առաջնորդութեամբ ըմբռնելի և հասանելի ընել մեր Տիրոջ Յիսուսի հրաջափառ Ս. Ծնունդը, Մարդեղութիւնը և մեղքերու Թողութեանը Աստուծոյ սրբարար Ներումով:

Դեկտեմբեր 2002

Ա. Նորատունկեան

ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱ՛ՌՔ ԽԱՂԱՂՈՒԹԻ՛ՒՆ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ՄԱՐԴՈՅ ՄԻՋԵՒ ԶԱՃՈՒԹԻՒՆ

Տիեզերքի և կեանքի վրայ նայելու չէ որպէս պատահակա-
նութիւն մը, այլ՝ Աստուծոյ էութեան և յայտնութեան ամենա-
պերճախօս մէկ յայտարարը: Հրեշտակներու ցնծերգութիւնը նման է
տեսիլքի մը անվերջանալի գոյացութեան, որ կը հոսի դէպի աստ-
ւածային էութիւն: Անսպառ հեղում մը, որուն խորհրդանիշը Լոյսն
է: Արջալոյսի գրկէն, Բերովբէից թեւերուն վրայէն, Հօրը ծոցէն վար
իջաւ Լոյսի Որդին՝ Լոյս ի Լուսոյն:

Աստուծոյ մարդացեալ մարմնացումը Յիսուս Քրիստոս՝
Աստուծոյ անստուեր Լոյսին ցոլֆն է և անքիծ ճառագայթումին
շողջողումը: Մարդիկ իրենց մարմնեղէն աչքերով պիտի չկարե-
նային տեսնել անմարմին Աստուածը՝ եթէ ԱստուածՈրդին չմար-
դանար: Մարդիկ՝ իրենց մահկանացու գիտութեամբ պիտի չկարե-
նային լիովին թափանցել և ըմբռնել աստուածային հարազատ
հոգեւոր յայտնութիւնը:

Հրեշտակներ՝ իրենց երկնագեղ աւետումը չ'ըրին Աթենքի
մարմարէ կառուցուած մեհեաններէն, ոչ Հոռմի ճարտարապետա-
կան կամարներու մէջէն, ու ո՛չ ալ Երուսաղէմի ձիւնափայլ տաճարի
սիւներու ընդմէջէն, այլ աստուածառաֆ հրեշտակներ երգեցին ու
տաղեցին աստեղազարդ երկնակամարներու տակ ու դաշտի համեստ
մարգագետնի վրայ և պարզ ու աղքատ հովիւներու հոգիներուն,
որովհետեւ անոնք բնութեան աննենգ զաւակներն են: Հովիւը
խնամարկուն է պաշտպանելու հօտը գայլերէ ու գողերէ: Յիսուսի
Ծնունդին, սակաւթիւ անձեր եկան հիւրասիրել Զինք, հովիւներ և
հեռաւոր մոզեր: Ո՞ւր էին աստուածաբաններն ու հոգեւորական-
ները: Ո՞ւր էին իրենք զիրենք բարեպաշտ կարծող կղերականները
Հազարաւոր հրեաներէն միայն քանի մը հատը եկաւ:

Հրեշտակներու քաղցրաբարբառ աւետիսին մէջ կը զգանք
Աստուծոյ ջերմ ծունչին հաղորդականութիւնը, հոն կը տեսնենք
Յիսուս Մանուկի կազդուրիչ Աւետիսը՝ բարի լուրը Քրիստոսի
Ծննդեան և Աստուածայայտնութեան՝ *հոգւոյ փրկութեան*
աւետիսը: «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ» հրեշտականուազ մեղեդին այսօր
ալ, հաւատաւորներու երգեցողութեամբ կը վերացնէ մեզ դէպի

Ամենակալի Աթոռին:

Տիեզերական թատերաբեմին վրայ խորախորհուրդ հրաշալիք մըն է Յիսուսի Մարդեղութիւնը: Արարչական մեծութեան անեղ կերպարանքը, Սուրբ Ծնունդը՝ խոնարհած է իջնել հողէ շինուած մարդերու մէջ, անոնց ծառայելու և զանոնք փրկելու համար: Յիսուս Բրիստոսի Մարդեղութիւնը հաղորդականութեան ամենէն նուիրական արտայայտութիւնն է: Հայր Աստուած ներթափանցելով և ներխուժելով, Իր Որդւոյն Յիսուսի միջոցով, մարդկային կեանքը կը կերպարանափոխէ և կը մղէ մարդը դէպի բարին ու ճշմարիտը և կատարեալը: Բրիստոնէութիւնը՝ Աստուծոյ **ԽՕՍԲԸ** Մարդեղութեան, և մարդու առաւել մարդացման կրօնքն է: Հին Կտակարանի մէջ Աստուածայայտնութիւնը կը սկսի Սովսէսի օրէնքներով, կը զարգանայ Սաղմոսներու մէջ, կը բարձրանայ և կը յառաջդիմէ երկնաբարձ գագաթներ մարգարէութեան մէջ ու գերագոյն կատարին կը հասնի Յիսուսի Ա. Մարդեղութեամբ, Անոր ապրումով և սրբաբար զոհողութեամբ:

Աստուած եղած է *Ճոռ նչ*, եղած է *Ջայն*, եղած է *Էրեւում*: Բրիստոսով՝ Անոր Մարդեղութեամբ Ան *եղաւ Մարմին*: Աէ՛րն է ակունքը Բրիստոսի Մարդեղութեան: Սուրբ Ծնունդը տօնն է Աստուծոյ մեծաստեանք Մարդեղութեան: Յիսուս միայն խօսքեր չարտաբերեց, այլ Ի՛նք եղաւ աստուածայորդ Խօսքը: Յիսուս Բրիստոսի Ա. Ծնունդով, Աստուած ներկայ եղաւ մարդոց մէջ (Էմմանուէլ), ուստի կրնայ ներկայ ըլլալ նաեւ բու և իմ մէջ ալ:

Պօղոս առաքեալ իր առաքելութեան բոլոր շրջանին, իր փորձառութեան ու տառապանքի բոլոր երեսակներուն մէջ զգաց ու ակնատես եղաւ, թէ «Մարդացած Բրիստոսի մէջ կը բնակի աստուածային բնութեան ամբողջ լիութիւնը»--Կող. Բ.Գ: Յիսուսի սուրբ Ծնունդը խորհրդագգաց յայտնագրութիւնն է անհննելի Հօր Աստուծոյ Բաղքահայեաց ու խորածածուկ խորհուրդին: Յիսուսի Մարդեղութենէ ճառագայթած լուսեղէն ուժերն էին, որ խթանեցին հեթանոս մոգերը ճամբորդել հազարաւոր մղոն, գտնելու, երկրպագելու և իրենց անձերը մատուցանելու այն Մանուկին, Որուն մէջ կրցան տեսնել աջխարհի Փրկիչը: Դատաստանին Սեծ Օրը Յաւերժաւանդ Բրիստոս պիտի ըսէ սոյն մոգերուն. *«Եկե՛ք Ինձի ո՛վ Հօրս գրկնածները, երանելի է՛ դուք, որովհետեւ Մանուկ մը միայն տեսնելով հաւատացի՛ք Ինձի»*:

Երկինքի մէջ նոր հորիզոն բացող այս Մանուկը պիտի բանայ նոր երկինք մը մարդոց հոգիներէն ներս ալ: Առէ՛ք ձեր

հոգիներուն մէջ Մանուկ Յիսուսը և ձեր սպառած կեանքին մէջ հաստատեցէք նոր կեանքը, առաւել կեանքը, հոգեւոր վերածնունդի նոր կեանքը: Դարձնե՛նք այսօր մեզմէ իւրաքանչիւրի հոգին Բեթղեհեմի (խոնարհ ու համեստ մսուրին) որպէսզի Աստուածորդին՝ Յիսուս Մանուկը հոն ծնի:

Յիսուս ինչո՞ւ ծնաւ մսուրի մը մէջ: Ինչո՞ւ մարդացաւ և հաղորդ ըլլալ ուզեց մարդու հողայնութեան և մահկանացութեան: Յիսուս յանձն առաւ և խոնարհեցաւ մարդկային հողայնութեան հետ, որպէսզի մենք, մարդ արարածներ, ստանանք աստուածային որդեգրութիւն: Մինչեւ որ Յիսուսի մարդեղութիւնը չճանազայթէ՝ մեր կեանքին մէջ, չմարմնաւորուի մեր գործերով, չգարդարուի առաքինութեան գոյնով, չդրոջմուի բարութեան բնութագիծով և չպտղաբերի երջանկութեան բարիքներով, մեր եկեղեցասիրութիւնը, մեր հաւատացեալ ըլլալը արժէք մը պիտի չներկայացնէ:

Արեւմուտքի մէջ Յիսուսի Ծնունդը կ'աւետեն «Ուրախ Ծնունդ» (Merry Christmas) յանկերգով որ շատ հոգեւոր իմաստ չունի: Հայկական ձեւը ոչ միայն աւելի գեղեցիկ է, այլ նաեւ ունի սուրբ գրային հիմք, հոգեւոր խորք և իմաստ:

«Յիսուս ծնաւ և Յայտնեցաւ, ձեզի մեզի մեծ Աւետիս»:

Քրիստոսի Ծնունդը, բարոյական դաս մըն է հպարտ մարդկութեան: Սուրբ Ծնունդին պատգամը՝ հեզութիւն է, բարութիւն և ներողամտութիւն: Յիսուս Քրիստոսի Ծնունդը, նոր ծնունդ մը պէտք է յայտնաբերէ մեր եւութեան մէջ: Քրիստոսի Սուրբ Ծնունդը՝ Աստուծոյ վերայայտնութիւնը ըլլալու է իւրաքանչիւր մարդ արարածին մէջ:

Աստուածորդւոյն մարմնական Ծնունդը իւրաքանչիւր հայորդիի սրտին մէջ վերածուելու է հոգեւոր Բեթղեհեմի: Յիսուսի Ծննդեան Տօնի թուականէ՛ն աւելի կարեւորն ու էականը՝ ***Տօնը ինքն է:***

Ինչո՞ւ համար Ս. Ծնունդը կորսնցուցած է իր աւանդական իմաստը և անոր առանցքը եղող Յիսուս Քրիստոսը: "Քրիսմըս" շատ բան կորսնցուցած է իր իմաստէն, որովհետեւ մարդիկ շահադիտակա՛ն նպատակներու ծառայեցուցած են զանիկա: Մարդիկ Ս. Ծնունդի անունով կը խօսին, սակայն Կաղանդ Պապան եղած է տիրականը վաճառատուներուն մէջ, ընտանեկան յարկերէն և սրտերէն ներս: Ս. Ծնունդը կը նոյնացնեն կարմիր հագուստով, ճերմակ մօրուհով,

նուէրներով ծանրաբեռն Կաղանդ Պապային հետ, որ եկեր է վաճառականներու գրպանները լեցնելու կանանց տղարներով: Մեծաշուք հանդէսներով կը տօնախմբեն Ս. Ծնունդը, և մեծադորոք երգերով ու ցոյցերով կը կատարեն անոր Ծննդեան Տօնը: Այս բոլորը արտաքին ցոյց է միայն, և վայելք: Մարդիկ նիւթականացուցած են Ջայն, հեռացած են Անոր Խորհուրդէն ու ոգիէն: Ծնունդը, այլեւս, հաճոյքի--մարմնական, նիւթական հանդէս դարձած է՝ բարեկամներու նուէր տալու և ստանալու օր մը միայն:

Յիսուս Բրիստոսի Մարդեղութիւնը գործնականօրէն կը բացայայտէ Աստուծոյ անսահման սիրոյ և թողութեան անչափութիւնը: Բրիստոսի Մարդեղութիւնը, ֆիզիքական գոյութիւն տուաւ աստուածաստեղծ անտեսանելի նկարագիրին, որովհետեւ մարմինն ալ Աստուծոյ ձեռագործն է: Անոր Մարդեղութիւնը կամրջեց աշխարհը երկնքի հետ: Բրիստոսի Մարդեղութիւնը այն լուսաճաճանց կամուրջը եղաւ, որ կը միացնէ Արարիչը՝ արարածին:

Բնական մարդը հակամէտ է մեղանչելու թէ՛ արարելով, թէ՛ խօսելով և թէ՛ պարզ մտածումով: Մարդ ծով մըն է կարիքներու, փափաքներու և հակասութիւններու: Յիսուս ծնաւ համադրելու և մղելու համար մարդու բնական մղումները դէպի աստուածակերպութիւնն ու բարին, որովհետեւ մարդ ունի կամենալու ուժ, բայց իրեն կը պակսի կատարելու կարողութիւնը:

«Հին մարդը» կամ **«մեղանչական մարդը»** (բոց. **"մեղքի մարմին"**) բացատրութիւնները կ'ակնարկեն մեղքով տիրապետւած այն կենցաղին, որ մարդ կ'ունենայ Աստուծոյ միանալէ առաջ: Երբ Բրիստոսի կը միանանք ապաշխարութեամբ, այս հին *իւնֆուրթիւ նը*: "կը մեռնի", որ կը նշանակէ՝ հին *նկարագիրը*: իրեն յատուկ բոլոր հետաքրքրութիւններով ու գործունէութիւններով ա՛լ կը դադրի, տեղ տալով *"նոր մարդ"* ուն, *նոր նկարագրի*: մը--Հռոմ. 2. 6:

Մարդիկ կան, որոնք կը դառնան միայն թիւ ու վիճակագրութիւն՝ բազմութիւններու մէջ ու կ'անհետանան ժամանակի յորձանքին հետ: Մարդիկ կան, որոնք կը բարձրանան իրենց անձէն վեր և իրենց ներկայութեան ջուհը կը թողուն իրենց անմիջական ջրջապատին վրայ: Ու դեռ կան մարդիկ, որոնք կը բարձրանան իրենց անձէն, ջրջապատէն ու ժամանակէն վեր, և կը նուիրեն իրենք գիրենք Աստուծոյ, ու իրենց ջնորհուած Գերբնական Ներկայութեամբ ջուք մը կը թողուն ամբողջ ժամանակաջրջանի մարդոցը վրայ: Այսպիսիներ կը կոչուին առաքեալներ և լուսաւորիչներ:

Աստուած որպէս Ճարտարապետը մարդու հոգիին, գիտէր որ ան ոչ պակաս մեծութեամբ, երկինք մըն է՝ մտնով, զգացումներով, երեւակայութեամբ և հոգեկան ապրումներով: Աստուած Իր ստեղծած մարդուն փափաքեցաւ տալ նաեւ յաւիտենական կեանք: Մոյն պատճառաւ, Յիսուս՝ իբր մարդաստեղծ Ճարտարապետ շողախեց Ինքզինք մարդու հողայնութեան՝ համտեսեց անոր տառապանքն ու ցաւը, որպէսզի մարդ ի՛նք ալ կարենայ դառնալ յաւերժական: Կրօնքի հետաքրքրութեան առարկան մարդկային հոգին է, անոր ներքին էութիւնը--Մատթ. ԺԶ. 26:

Հերովդէս Ա. որ կառուցեց Երուսաղէմի տաճարը, կայծակնային հարուածով փորձեց վերջ դնել Յիսուս Մանուկի կեանքին: Երեսուն տարի ետք, վերստին մէջտեղ կու գայ Յիսուս: Չայն արծարծողն է Յովհաննէս Մկրտիչ Յորդանան գետի ափին: Յովհաննէս Մկրտիչ որ պրծած էր մանուկներու կոտորածէն, կը գլխատուի Հերովդէս Բ.-ի կողմէ: Չարը կրնայ իր դաժան վայրագութեամբ հեռացնել կամ ուշացնել Ճշմարտութիւնը, և արդարութիւնը, սակայն չի կրնար խափանել արգիլել կամ մարել իրաւունքի և արդարութեան ճառագայթող լոյսը:

Երբ Յիսուս ծնաւ, այդ ժամանակաշրջանին սկիզբը, հոռոմէական ընդարձակ կայսրութեան վրայ կ'իջիւէր Օգոստիանոս Օգոստոս կայսրը, իսկ Պաղեստինի վրայ կը թագաւորէր Հերովդէս թագաւորը հոռոմէական տիրպետութեան ենթակայ: Այս զազիր մարդը՝ Հոկտաւիանոս Արեւմուտքի տէրն էր երբ ծնաւ Յիսուս:

Թնդանօթներ չորոտացին Անոր Ծննդեան աւետիսը հաղորդելու իր հպատակներուն: Թագաւորներ կ'իջիւնէն սուրով ու բռնութեամբ, բայց, այս նոր Թագաւորը սուր չունի, անմեղ Մանուկ մըն է, *սիրո՞ւյ* կ'ուզէ իջիւնել մարդոց սիրտերուն ու հոգիներուն: «Մարդ երկու անգամ կը ծնի, առաջինը բնական ծնունդն է, իսկ երկրորդը այն պահն է, երբ անհատը իր էութեան մէջ կը զգայ, թէ ի՞նչ բանի համար ծնած է»: «Իւրաքանչիւր երիտասարդ պէտք է կոչում մը զգայ կամ ստանայ, և այդ կոչումին իրագործմանը համար պէտք է պատրաստուի իր երիտասարդութեան օրերուն»--Գարեգին Ա. Կաթ.

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ ԵՂԱԾ ՄԱՐԳԱՐԷՌԻԹԻՒՆՆԵՐԸ

Մարգարէներուն անձնական կենսագրութիւնները չունինք, այլ միայն անոնց պատգամը: "Մարգարէ" յունարէն լեզուով կը նշանակէ.

«Ան որ Աստուծոյ ներշնչումով կը խօսի»:

Աստուած աստիճանաբար progressively յայտնեց սկզբնական արարչագործութեան խորհուրդը և Ինֆզինֆ ներկայացուց ձին Կտակարանի մարգարէներուն: «Յիսուսի մասին վկայե՛լն է բուն մարգարէութեան հոգին», Գրաբարը ունի.

*«Արովհետեւ այդ տեսիլքը և մարգարէական հոգին
Յիսուսի կողմէ հաստատուեցաւ, քանի որ մարգարէներ Մուրք Հոգիին միջոցաւ էր որ Յիսուսի մասին վկայութիւն տուին»--Յայտ. ԺԹ. 10:*

Մեսիական մարգարէութիւններուն իմաստը հետեւեալն է:

*«Եթէ բոլոր մարգարէութիւնները գիտնաս
ու լեզուները խօսիս, բայց սէր չու նենաս,
ես ձայն տառու պղինձի պէս եմ».*

Անտակ Որդւոյն մեծ եղբայրը բոլոր օրէնքը պահեց, բայց սէր չունէր եղբօրը հանդէպ, հետեւաբար դուրս մնաց հօրը սարճած հանդէսէն և ուրախութենէն:

Յիսուս Քրիստոսի Ա. Ծնունդը Մարգարէացուած էր Եսայի մարգարէին կողմէ--Գլուխ Թ. 2, 6-7:

Եսայի մօտ 60 տարի մարգարէութիւն քրաւ Ն.Բ. 759-690-- Մեսիային մասին այնքան ջատ և որոջ գրած է ան, որ իր գիրքը "Աետարան" և ինքը "Աետարանիչ" կը կոչուի: Մեծագոյնն է ձին Կտակարանի բոլոր մարգարէներուն: Կայծակնաշուրթն բանաստեղծ և պայծառատես Եսայի մարգարէն երուսաղէմացի է: Վախճանական --յայտնողական սարսափազրու և փոթորկայոյզ իրադա ընթաց- թեան ժամանակներ ապրած է ան: Անորգլխաւոր նախատեսութիւններն են հետեւեալները.

*«Խաւարի մէջ պտըստող ժողովուրդը մեծ լոյս տեսաւ,
Մահուան ստուերին երկիրը բնակողներուն լոյս ծագեցաւ»:
Վասնզի մեզի մանուկ մը ծնաւ,
Մեզի Որդի մը տրուեցաւ,
Եւ իշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ,
Ու անոր անունը պիտի կոչուի*

Մհանջելի, Խորհրդակից, Հզօր Աստուած,
Յախտենականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան,
Դաւիթի աթոռին վրայ ու անոր թագաւորութեանը վրայ,
Անոր իշխանութեանը մեծնալուն ու խաղաղութեանը սահման չկայ,
Որպէս զի հիմակուրնէ մինչեւ յաւիտեան
Իրաւունքով ու արդարութիւնով հաստատէ և զօրացնէ զանիկա:
Զօրաց Տիրոջը նախանձը պիտի ընէ ասիկա:

--**Եսայի Թ. 2, 6-7**

Մարգարէներու գիրքերը դիւցազնական արտայայտութիւններն են Հին Կտակարանի կրօնական քաջ ուսուցիչներուն: Անոնք կը շեշտեն չորս յոյժ կարեւոր իրողութիւններ`

1. Աստուած ամենակալ Տէրն է, Ղեկավարը «բնութեան և մարդկային պատմութեան»:
2. Աստուած սուրբ է, և սրբութիւն ու արդարութիւն կը պահանջէ մարդոցմէ:
3. Մեղքը բաժանումն է Աստուծմէ, և մեղքն է անհատներուն, ժողովուրդներուն և ազգերուն կործանման բուն պատճառը:
4. Մեղքը չի ջնջուիր կենդանիներու գոհերով և նուէրներով, այլ կը ներուի առ Աստուած վերադարձով` զղջումով, խոստովանութիւնով ու խոնարհութիւնով:

Աստուածային շնորհիւ է ստանալ տեսիլք, լոյս, պատգամ ու կոչում: Տեսիլքը ինքնանպատակ չէ, այլ միջոցն է գերագոյն նպատակի մը համար: Հայ գիրերն ալ աղօթքի և տեսիլքի արդիւնք են: Աստուած ըսաւ Պօղոսի` *«Ենչի երեւցայ՝ որպէսզի քեզ Ինձի օգնական դարձնեմ և վկայ տեսածներուդ և դեր տեսնելիքներուդ՝ որոնցմով պիտի երեւիմ քեզի»* -- Գործք ԻԶ. 16:

Տեսիլք ունեցող երիտասարդներու պէտք ունի Աստուած և Հայ ժողովուրդը: Տեսիլքը կը տեսնուի արթուն վիճակի մէջ: Արթուն ըլլալ կը նշանակէ ժիր, կայտառ, աշխոյժ և գործօն կեանք ունենալ: Վարդանանց պատերազմը վերջ գտաւ այդ օրուան ճակատամարտով, որուն հետեւանքը եղաւ պարսից բանակին Հայաստան խուժելը, թալան ու մահ: Միւս կողմէ, սակայն Ռջտունեաց տունէն Ջուիկ Մամիկոնեան Հմայեակին տիկինը, իր երեք կորիւնները և անոնց կողքին մի քանի ուրիշ հայու կորիւններ կը դաստիարակէր ու կը պատրաստէր զանոնք տեսիլք ունենալու: Մամիկոնեան Ջուիկ տիկինը իր մանչերուն երիտասարդութեան օրերուն համար անոնց օժիտ կը պատրաստէր, և այդ օժիտը ուրիշ բան չէր եթէ ոչ տեսիլք, ***աստուած պաշտութեան և հայրենասիրութեան տեսիլքը:***

Մարգարեները Աստուծոյ կամփին պատկառագրու միջնորդները եղած են սկզբնական դարերէ ի վեր: Անոնք պարտաւոր էին ժողովուրդը ուսուցանել և գալիք աղէտներէն զանոնք զգուշացնել: Մարգարեները բողոքած են իշխողներու, ունեւորներու դէմ գիւղացիներու հողագրկումի և ճնշումի դէմ: Բարոյական սկզբունքը աւելի վեր դասած են պաշտամունքային մերկ ծէսերէն և կենդանիներու զոհաբերութենէն: Ողբերգական վախճան ունեցած են բոլոր մարգարեները--Մատթ. ԻԳ. 29-37:

Հաւատի գործիչներ տեսիլքէ տեսիլք խոյացող՝ հոգւոյ տէր անձինք, ինքզինքնին կը համարէին միջոցներն ու գործիքները միայն, Գերագոյն Իմաստութեան մը, որ հաճած էր այցելել արկածեալ ազգի մը ճակատագրին և ուղղել զայն դէպի փրկութիւն: «Աստուածաշունչ Մատեանին թարգմանութեան անհրաժեշտութիւնը՝ աւագ ներշնչիչը եղաւ ստեղծագործ տեսիլներու: Գիրերու գիւտով յորդեցաւ դարերէն լեցուած աւազանը հայ միտքին»: Աստուածային տեսիլով յայտնուած իւրաքանչիւր գիր նոր ակօսներ բացաւ հայ հոգիին ընդարձակ դաշտին մէջ:

Տեսլապաշտ հոգիներ, աննահանջ պայքարողներ և մահուան դէմ մահառող առիւծասիրտ ազատամարտիկներ գործակիցները եղան Աստուծոյ ու կերտեցին Յիսուսի Եկեղեցին քար առ քար, ոչ թէ բիրտ զէնքով, այլ իրենց նահատակութեամբ: Մարգարեական հոգիով ու տեսիլքի յայտնութեամբ: զԱստուած՝ կը տեսնենք Յիսուսի ապրումին մէջ, Անոր մէջէն կը դիտենք և Անոր միջոցով կը ճանչնանք Զինք:

Տեսնե՛լ միայն արտաքին կերպարանքին նայել չէ: Տեսնե՛լ մարմնական աչքով ակնարկ մը նետել չէ, այլ մտքով և հոգիով ներթափանցել ըմբռնել և ճանչնալ է առարկան կամ անձնաւորութիւնը: Տեսողութիւնը միայն մարմնական աչքով չէ, այլ հոգիին և սրտին տեսանելիութեամբ է: Կարեւորը տեսնելը չէ միայն, այլ նայելէն ետք՝ **զգա՛լն** է:

Թարգմանիչներու գծած ճամբան՝ «Տեսնելն էր տեսանելիէն անդին Անտեսը, ժամանակաւորէն անդին՝ Յաւիտենականը, "գնաց-բ"էն անդին "հաւատ"ը, այսինքն դէպքերէն և իրողութիւններէն անդին զանոնք յառաջ բերող **Զօրութիւնը՝ Աստուածայայտնութիւնը**»: Մեր մտային ու հոգեւոր կեանքին որակը կը բնորոշուի մեր տեսողական արժեքներու չափով: Արդեօք արժեքափա՞ծ ենք մեր դիտածները և արժեւորա՞ծ մեր տեսածները: Առանց ներքին տեսութեան և իմացական լուսաւորութեան չկայ

գեղեցկութիւն, չկայ բարին և չկայ յաւերժութիւն:

*Յիսուս Զրիստոս ոչ ուսմունք է, ոչ
տեսութիւն, այլ Ան Իր ապրումով
բացայայտեց Աստուած անիմանալին:*

Յիսուս Զրիստոսի Ա. Ծնունդն ու Յարութիւնը երեւոյթ մը չէր, գաղափարական տեսութիւն մը չէր, հոգեհմայական ցնորք կամ երեւակայական մտաբերութիւն մը չէր, այլ առաքելական եկեղեցւոյ անխոցելի գօրութիւնը և անսպառ ուժ-կորովը: Այդ իրա՛ւ ճշմարտութեան սիրոյն անունք նուիրեցին իրենց անձերը ու ողջագուրեցին նահատակութիւնը: Հաւատացեալ մը հնազանդելու է Աւետարանի՝ Հոգիին, ոչ թէ ենթարկելու է զայն իր տեսութեան և մարմնահա՛ճ տրամաբանութեան:

Եսայի մարգարէն, հոգեկան յափշտակութեան մէջ, կ'ապրի "Յաւիտենական Ներկան" և Յիսուսի Ծնունդը կը միաւորէ, կը գուգէ Անոր Երկրորդ Գալուստի մարգարեութեան հետ, ըսելով.

Ու Յեսսէի բունէն ջառաւիղ պիտի ելլէ,
Եւ անոր արմատէն ընձիւղ պիտի բուսնի.
Ու անոր վրայ պիտի հանգչի Տիրոջը Հոգին,
Իմաստութեան ու հանճարի Հոգին,
Խորհուրդի ու գօրութեան Հոգին,
Գիտութեան և Աստուծոյ վախին Հոգին,

Ու Անիկա Տիրոջը վախովը պիտի լեցուի.

Եւ իր աչքերուն տեսածին համեմատ պիտի չդատէ,
Հապա աղբատին դասը արդարութեամբ պիտի տեսնէ,

Ու երկրին գրկուածներուն համար իրաւամբ պիտի յանդիմանէ,

Եւ իր բերնին գաւազանով երկիրը պիտի զարնէ:

Եւ զայլը գառին հետ պիտի բնակի,

Ու ինձը ուլին հետ պիտի պառկի,

Եւ որթը ու առոյգ առիւծը և պարարտ զուարակը

մէկտեղ պիտի արածին,

Ու զանոնք պզտիկ տղայ մը պիտի բշէ:

Անոնք պիտի չվնասեն ու չապականեն իմ բոլոր սուրբ
լերանս վրայ.

Զանգի երկիր *Տիրոջը գիտութիւնովը* պիտի լեցուի,

Ինչպէս ջուրերը ծովը կը ծածկեն:

--Եսայի ԺԱ. 1-3, 4, 6, 9:

Ինչո՞ւ աստուածային տեսութիւնները կը տրուին Իր ծառաներուն՝ մարգարէներուն: Մարդ իր գեղեցիկ գաղափարները կ'ուզէ բաժնել իր մտերիմ բարեկամներուն հետ, նոյնպէս ալ Աստուած կը փափաքի յայտնել Իր նախածրագիրները Զինք սիրողներուն և հաւատարիմներուն: Աստուած կը տեսնէ մարդ արարածին ներութիւնները և դժուարութիւնները, ու որպէս բաջալերանք ու խթան ցոյց կու տայ յաւերժական հանդիսութեան և երջանկութեան պատահիկները որպէս տեսիլներ: Պօղոս առաքեալ կը գրէ Կորնթացոց եկեղեցիին ըսելով.

«Ինչ որ աչքը չտեսաւ, ազանցը չլսեց և մարդու սիրտը չհնկաւ՝ Աստուած պատրաստեց զայն Իր սիրելիներուն համար» --Ա. Կոր. Բ. 9:

Բնաւ չստորագնահատենք մարգարէներն ու անոնց մարգարէութիւնները, նոյնիսկ եթէ չկարենանք հասկնալ զանոնք: Այլ խոնարհի՛նք սոյն պատգամներուն առջեւ, որովհետեւ մեզի անխմանալի թուող պատգամները, նախատեսութիւններ են ապագային ըլլալիք աստուածահրաշ ղէպներու, որոնք մարդոց հասողութենէն վեր են ու անդին: Եթէ կ'ուզենք անպայման բան մը ընել, կրնանք ջնորհակալութիւն յայտնել Աստուծոյ ու փառաբանել Զինք աղօթքով և ծառայելով Անոր:

Աստուծոյ ուզածը, ո՛չ թէ մեր աշխարհէ բաժնուի՛լն է, այլ Անոր ծառայե՛լ է: Բոլոր այն մարդիկը, որոնք ծառայած են մարդկութեան, սպասաւորած են Աստուծոյ: Ծառայութիւնը երջանկութեան գաղտիններէն մին է: Կարելի չէ երեւակայել մայր մը որ ծառայած ըլլայ իր ընտանիքին ու երջանիկ չէ եղած:

ՃՈՐՃ ՈՒԱՃԻՆԿԹԸՆ ԳԱՐՎԸՐԻ (սեւամորթ ամերիկացի գերիի մը տղան) Տապանաբարին վրայ գրուած է.

«Կրնար ըլլալ մեծահարուստ ու համբաւաւոր, սակայն չփնտռեց փոռք: Ան գտաւ երջանկութիւն և գոհացում ծառայելով և օգնելով համայն մարդկութեան»:

Եսայի աստուածախօս մարգարէութիւններուն մէջ կը տեսնենք արարչական մեծութեան անեղ կերպարանքը՝ խոնարհած հողէ ջինւած մարդերու մէջ, անոնց ծառայելու համար: Հեթանոս և կուպաշտ իմաստասէրներ դժուարութիւն ունէին ըմբռնելու աստուած-

ներու խոնարհութիւնը, որովհետեւ իրենց հաւատացած աստուած-ները գոռոզ էին, վրէժխնդիր, վայրագ անկարեկիր և անձնասէր: Իմաստասէրներէն ու մոգերէն միայն բացառիկ և փոքրիկ թիւ մըն են անոնք որոնք կրցան ըմբռնել հրեայ մարգարէներու մարդասէր Աստուծոյ տեսութիւնը:

Մարդ իր մեծագոյն կորուստը կը կրէ երբ իր մէջ կը մահանայ պարելու տենչը, պայքարելու կամքը և ծառայելու պատրաստակամութիւնը: Աստուած մարդը Իր պատկերին նմանութեամբ կը կերտէ: Աստուծոյ պատկերը, մարդը՝ անդիմագիծ անասունէ կը բարձրացնէ դէպի *անէ նա որոյ թեալ* մը: Աստուած և մարդ կը յարաբերին ու կը հաղորդուին: Աստուած աշխարհը ամբողջութեամբ, մարդուն համար ստեղծեց: Մարդն ալ իր կարգին արարուած էր ծառայելու և սիրելու զԱստուած: Իրականացնելու իր գոյութեան պատճառը: Մարդ *արարածը* այնքան արժեքաւոր է Աստուծոյ համար, որ Ան չխնայեց նոյնիսկ Իր Միածինը, որպէսզի մարդ էակը աստուածանայ:

Քրիստոսի եկեղեցին կ'արժեւորուի երբ ան դուրս գտնուողները ներս կը հրապուրէ, ներսը գտնուողներուն կ'օգնէ որ զԱստուած պաշտեն ճշմարտութեամբ, և դուրս կ'արձակէ զանոնք ծառայելու համար մարդկութեան: Յիսուս ոչինչ ակնկալող մըն էր իր պատրաստակամութեանը մէջ: Ան **ծառայի** կերպարանով եկաւ աշխարհ:

Վիշտը և տառապանքը թէեւ բացասական կը կարծուին ըլլալ սակայն կեանքի դաժան պայմանները, կարծէք, արժեքները երեւան բերելու, տաղանդը ծաղկեցնելու և ուռճացնելու ծառայող, ու մանաւանդ մարդու ջիւղը պրկուած պահելու՝ զօրաւոր ազդակներ են: Աթոռները, պաշտօնները, հանգամանքները կ'արժեւորուին միայն ծառայութեամբ--ազգանուէր ու եկեղեցաշէն ծառայութեամբ:

Յիսուսի աշակերտները ճանչցան իրենց Վարդապետը մի միայն Անոր ծառայութեան, խաչելութեան ու Յարութեան ընդմէջէն: Ծառայութեան ամենամեծ օրինակը Քրիստոսի Մարդեղութիւնն էր: Ան Իր **«Անձը ու նայնացուց՝ ծառայի կերպարանք առնելով»:**

Յովհաննէս Կոլոս և Յակոբ Նալեան Կոստանդնուպոլսոյ պատրիարքներ և Գրիգոր Ծղթայակիր Երուսաղէմի պատրիարք, կրցան նշանաւոր ծառայութիւններ ընել և արդիւնքներ յայտնաբերել միեւնոյն նպատակով, առանց իրենց ազգային եկեղեցւոյն անհաւատարիմ գտնուելու: Քրիստոս Իր կենդանի օրինակով մարմնացուց հեզութիւնը, խոնարհութիւնը և ծառայութիւնը:

Աւետարանիչ ու մարգարէ Եսայի կը շարունակէ մարդկութեան տալ իր տեսիլք՝ նախատեսութեան պատարիկներէն, ու կ'ըսէ.

Ելիր, լուսաւորուէ. քանզի քու լոյսդ եկաւ,
 Ու Տիրոջը փառքը քու վրայ ծագեցաւ:
 Վասնզի անա երկիրը խաւար
 Ու ազգերը մառախուղ պիտի ծածկէ.
 Բայց քու վրայ Տէրը պիտի ծագի,
 Եւ անոր փառքը քու վրայ պիտի երեւնայ,
 Ու քու լոյսիդ ազգեր պիտի գան,
 Եւ քու վրայ ծագած պայծառութեանը՝ թագաւորներ:
 Մէյմըն ալ ցորեկը քու լոյսդ արեւը պիտի չըլլայ,
 Ու գիշերը լուսինը իր պայծառութիւնովը քեզի լոյս
 պիտի չտայ,
 Հապա Եհովա քեզի յաւիտենական լոյս,
 Եւ քու Աստուածդ քու փառքդ պիտի ըլլայ:

--Եսայի Կ. 1-3, 19:

Մարդեղեալ Տիսուս ոչ միայն պիտի ծառայէ՛ր մարդկութեան,
 այլ նաեւ պիտի ըլլար Լուսաւորիչը մարդաշխարհին: Ան ոչ միայն
 պիտի դառնար փոքր կանթեղ մը, այլ պիտի ցլացնէր Արարիչ
 Աստուծոյ Լոյսը: *«Քու վրայ Տէրը պիտի ծագի, Եւ Անոր փառքը քու
 վրայ պիտի երեւնայ»*: Այսինքն ձա՛յր Աստուծոյ Լոյսը, սիրո՛յ ու
 ողորմութեա՛ն Լոյսը, հաշտութեա՛ն և փրկութեան՝ Լոյսը, խաղա-
 դութեան և անդորրութեա՛ն Լոյսը: Մէկ խօսքով՝ լոյս բաշխել և սեր
 սփռել ու գոհուիլ ուրիշին համար:

Աստուած նախ կը ցուցունէ Իր Լոյսը, ապա այդ լոյսին մէջ
 Ինքզինքը: Ան կը հրաւիրէ քեզ լուսանել ներմասարահր հաւատքի
 դրեակին:

*«Լո՛յս,
 Արարիչ Լուսոյ,
 Առաջին Լոյս,
 Բնակեալդ ի Լոյս անմատոյց,
 Ի ծագել Լուսոյ առաւօտու,
 Մագեա՛ ի հոգիս մէջ,
 Զլոյս քո իմանալի»*

--Ս. Ներսէս Ծնորհալի

Ո՛րք են այն բոլորը, որոնք կը տեսնուին Հովիվուտի մէջ,
 որպէս կեանք ու մթնոլորտ, գոյն ու լոյս, երգ ու պար: Տնորք են
 այդ բոլոր երեւոյթները, որովհետեւ խաւարի ու գեղխութեան մէջ
 անոնք կը տուայտին ու իրենց կեանքը կը վերջացնեն անձնասպա-
 նութեամբ:

Մարդու յոգնած մարմինը կազդույր կը փնտռէ, իսկ հոգին լոյս: Առաքեալներու կեանքը համակ, եղաւ գրկանք ու տառապանք, նուիրում, պայքար ու նահատակութիւն որպէսզի չկտրուի յաւերժութեան Լոյսը՝ Յիսուս Քրիստոս: Մեր Տէրը ոչ մի տող գրած է, բայց ապրած է իր աջակերտներու ընկերակցութեան մէջ իբրեւ կենդանի Գիրք: Իր պատուիրաններով այնպիսի Լոյս սփռած է անոնց հոգիներէն ներս, որ անջնջելի պիտի մնայ յաւերժօրէն:

***«Աստուած դեռ նոր Լոյս ունի ծագեցնելիք
Իր Սուրբ Խօսքին»***-երեց Ռօպինսոն:

Աստուած ըսաւ. *“Թող Լոյս ըլլայ”*: Տիեզերք լուսաւորուեցաւ, բայց ոչ չար, նախանձ, ազահ, վրէժխնդիր և կեղծաւոր մարդոց սրտերը: Աստուած խաւարէն՝ լոյս ծագեց, մահէն՝ կեանք, ապականութենէն՝ անապականութիւն և անգիտութենէն՝ դէպի իր ճշմարիտ գիտութիւնը: Յիսուս Քրիստոս ո՛չ միայն կանչեց Պօղոսը Իր ծառայութեան, այլ նաեւ դրկե՛ց զինք որպէս հեթանոսներու առաքեալ ըսելով.

«Ես բնօրէն երեւցայ անոր հաւար որ բնօր դարձ նեւ պաշտօնեայ և վկայ այն բաներու ն, որոնց մէջ տեսար Ջիս, նաեւ այն բաներու ն, որոնցմով պիտի երեւ նամ բնօրի՝ փրկելու հաւար բնօր այն ժողովուրդէն և հեթանոսներէն, որոնց պիտի դրկեմ բնօր, որ բանաս անոնց աչքերը, խաւարէն լոյսին դարձ նեւ զանոնք, և սասանայի իջխանութենէն՝ Աստուծոյ, որպէսզի անոնք մեղքերու թողութիւն ստանան և սուրբերու հետ ծառայութեան բաժինը Ինձի հանդէպ ու նեցած իրենց հաւատով»-Գործք ԻԶ.16-18:

***Կեանքը, լոյսի և խաւարի պայքարն է,
Բարիի ու չարի կռիւն է:***

Լոյսի ու խաւարի պայքարին մէջ, Լոյսի յաղթութիւնը աներկբայելի է: Խաւարը Լոյսին դիմաց կը փախչի: Լոյսի և խաւարի գաղափարական պայքարը գոյութիւն ունի ամէն կրօնի մէջ:

«Լոյս, Արարիչ լուսոյ, Առաջին լոյս»:
«Լոյս, իմանալի լոյս»:
**«Առաւօտ լուսոյ, Արեգակն արդար,
առ իս լոյս ծագեա»:**

«Բանը (Յիսուս) մարմին եղաւ և մեր մէջ բնակեցաւ», որ լոյս ունենանք, ու մանաւանդ՝ *լոյս դառնանք*: Աստուած ըսաւ. «Խաւարի մէջ լոյս ծագի»: Եւ լոյս զօրութիւնը այսօր ալ կը ծագի մեր խաւարած մտքին մէջ մեզ արթնցնելու և գործօն դարձնելու: Աստուած դեռ լոյսեր ունի տալիք ու յայտնութիւններ ունի հաղորդելիք Իր ծառաներուն: Լուսադէմին, գիշերային խաւարը փարատող առաջին լոյսերուն հետ, համամարդկային պատմութեան թաւալքը կանգ առաւ պահ մը, ջունչը բռնած հետեւելու համար այն ողբերգութեան որ կը ներկայացուէր Երուսաղէմի նեղ փողոցներուն մէջ, ուր Նազովրեցի Մարգարէն ջալկած ծանր խաչ մը դանդաղօրէն կը բալէր, լուսաւորելու մարդկային միտքն ու փրկելու անոր հոգին:

Մտքի լոյսը որպէս կշիռ կը գործէ: Կը հաջուէ, կը չափէ, կը գննէ ու կը բաղդատէ: Մարդ այդ լոյսը ստացաւ գերագոյն Լոյսէն: Հոգեկան Լոյսը կ'առաջնորդէ ո՛չ միայն գիտնալու և ճանչնալու, այլ՝ այդ ճանչցուած **Մէկը** իւրացնելու, գԱյն ապրելու և Անոր նմանելու:

Հոգեկան Լոյսն է, որ Մագդաղենացին իր աղտոտ կեանքէն բարձրացուց անբասիր սրբութեան: Յիսուսի Հոգեկան Լոյսն է. «*Նա եւ աշխարհի Լոյսը*»--Յով. Ը. 12, որ յեղաշրջեց հեթանոս աշխարհը և Հայաստան աշխարհը: Հոգեկան Լոյսն է, որ կառուցեց վանքեր, մենաստաններ, որբանոցներ, հիւանդանոցներ, բոլորտանոցներ ամոհելու համար վիշտն ու թշուառութիւնը:

Հոգեւոր Լոյսը, երաշխիքն է՝ յաւիտենական կեանքի:

«Խոր Վիրապէն ճառագայթող լոյսը բալեց հայ ժողովուրդի ճամբաներէն, ապրեցաւ հայ ժողովուրդի սրտին զարկով ու դարձաւ Նարեկացի, Ծնորհալի ու Տաթեւացի ու մանաւանդ վերապրեցուց Մեծ Եղեռնէն պրծող հաւատացեալները»--Գարեգին Ա. Կաթողիկոս: Մարդ կեանքին մէջ երբեք խաւարին հետ չի խօսիր, այլ Լոյսին հետ: Խօսի՛նք Աստուծոյ հետ ոչ միայն երբ նեղն ենք ու մտահոգ, այլ երբ ուրախ ենք ու երջանիկ: Պատմե՛նք Աստուծոյ, թէ որքա՛ն կը գնահատենք Իր բարիքներն ու շնորհները, Իր ողորմութիւններն ու կարեկցութիւնը: Յայտնե՛նք Իրեն մեր սերն ու շնորհակալութիւնը այս սուրբ Ծնունդին: Ինչո՞ւ, որովհետեւ շնորհակալութիւնն ու գոհութիւնը մարդու մը սրտին ու մտքին յիշողութիւնն է: Ան

կ'ընդգրկե անոր անցեալը, ներկան ու ապագան:

Հաւատա՛նք աստուածայայտ Ծնունդէն Ճառագայթող Լոյսին ու անկէ բխող *վերածնունդ* կեանքին ու շնորհակալութիւն յայտնենք մեր երկնաւոր Հօր Իր բոլոր պարգեւներուն համար: Յիսուս քաղեց տառապանքի խաւար քարանցաւ մութին մէջ միայնակ, ու գծեց այն լուսաշաւիղ ճանապարհը, որ փշոտ և դժուարանցանելի էր մեզ համար:

Հակառակ 20-րդ լուսաւորեալ դարու զարգացման ու բարգաւաճման, մարդկութիւնը դեռ կը խարխափի մթութեան մէջ և կ'ապրի յետամնաց հեթանոսի հոգեբանութեամբ: Մարդիկ դարձած են փոքրհոգի, անձնակեդրոն ու հանգստաւեր: Իրենց գերագոյն հաճոյքը և հոգեկան գոհունակութիւնը կը փնտռեն մէկ այլ անհատի անկման, ձախողութեան ու անբախտութեան մէջ: Աստուածային սիրոյ էութիւնն ու իսկութիւնը սրտի լուսաւորումն է ուրախութեամբ: Մեռութեան մէջ Աստուծոյ հետ յարաբերութիւնն ու հաղորդութիւնը կ'առիւնքնէ հոգին, սիրտը և միտքը: Յիսուս, Պօղոս առաքեալին հանդիպեցաւ երկինքէն լուսեղէն և ձայնեղէն հզօր ներգործութեամբ: Միթէ Ան չէ՞ հանդիպած բեզի և ինծի նոյն զօրութեամբ:

ՅԻՍՈՒՄԻ ԾՆՆԴԵԱՆ ԱՒԵՏՈՒՄԸ

«Վեցերորդ ամսուն Գաբրիէլ հրեշտակը Աստուծմէ որկուեցաւ Գալիլեայի մէկ բաղաբը, որուն անունը Նազարէթ էր, կոյսի մը, որ նշանուած էր Յովսէփ անունով մարդու մը հետ: Եւ այդ կոյսին անունը Մարիամ էր:

Եւ հրեշտակը մօտենալով անոր՝ ըսաւ. «Ուրախացի՛ր, շնորհընկալո՛ւ, Տէրը բեզի հետ է: ...Մի՛ վախնար, Մարիա՛մ, որովհետեւ Աստուծմէ շնորհ գտար: Եւ ահա դուն պիտի յղանաս և որդի մը պիտի ծննիս ու Անոր անունը Յիսուս պիտի դնես: Ան մեծ պիտի ըլլայ և Բարձրեալի Որդի պիտի կոչուի: Եւ Տէր Աստուած անոր պիտի տայ իր հօր՝ Դաւիթի աթոռը, եւ ան յաւիտեան պիտի թագաւորէ Յակոբի տան վրայ, ու անոր թագաւորութիւնը վախճան պիտի չունենայ:

Մարիամ ըսաւ հրեշտակին. «Ինչպէ՞ս կրնայ պատահիլ ինծի ատիկա, քանի որ ես այր մարդ չեմ ճանչնար»: Հրեշտակը պատասխանեց և ըսաւ անոր. «Մուրբ ձոգին պիտի գայ քու վրայ, և Բարձրեալին զօրութիւնը հովանի պիտի ըլլայ բեզի, որովհետեւ ան

որ Բեզմէ պիտի ծնի՝ սուրբ է և Աստուծոյ Որդի պիտի կոչուի: ...Եւ Մարիամ ըսաւ. «Ահա՛ւասիկ Տիրոջ աղախինն եմ ես, քու խօսքիդ համաձայն թող ըլլայ ինձի»--Ղուկ. Ա. 26-38:

Բազմաթիւ համեստ և գեղջուկ կոյսեր կային Հրէաստանի մէջ: Ինչո՞ւ արդեօք այս իւրայատուկ և ուրոյն կոյսը ընտրուեցաւ ըլլալու Սուրբ Մարդեղութեան ինֆնատիպ մայրը: Տիրամայրը քաջաբար կեանքը ընդգրկող մէկն էր և ոչ թէ կեանքէ փախուստ տուող մը: Առանց Մարիամի ինֆնանուէր ընծայման, առանց անոր խոնարհութեան, որով ինքզինք հնազանդութեամբ ենթարկեց աստուածային գերազանց Կամֆին, Մարիամ պիտի կորսնցնէր իրեն շնորհուած առիթը, և աշխարհի փրկութեան ծրագիրը պիտի վստահուէր ուրիշի մը:

Մարդկութեան դատապարտութեան պատճառը եղած էր առաջին կինը, Եւան: Եւայի արմատէն բուսաւ նոր Եւան, Ս. Կոյսը, որ *միջոցը* դարձաւ մարդոց փրկութեան: Խաւարի հրեշտակը խաբեց Եւան, սուտ մեծութեան և աստուածացումի պատրանքով, մինչ բարի հրեշտակ Գաբրիէլ, Մարիամը համոզեց հնազանդելու Աստուծոյ Կամֆին:

«Ահա՛ւասիկ Տիրոջ աղախինն եմ ես, քու խօսքիդ համաձայն թող ըլլայ ինձի»:

Տիրամայրը մեզի կ'աւանդէ անձնանուիրումի և զոհաբերութեան մեծագոյն դասը: Տիրամայրն է Սուրբ Կոյսը, Յիսուսածին: Իր աչքերը թոված են պայծա՛ր տեսիլքները, ունկնդրած է օրհներգ- ներու, զգացած է բո՛յրը վարդերու, ջրթները բացուած են միայն աղօթելու համար, և սիրտը ճանչցած է Աէ՛րը Գերբնականին: Ուստի մենք՝ երկրածիններ, խոր հաւատո՛վ դիտենք երկնածնունդ Մանուկ Յիսուսը: Մայրե՛ր, քոյրե՛ր հայրեր և եղբայրներ ծնրադ-րե՛նք Անոր առջեւ: Երգենք ու պանծացնե՛նք Ձինք բոլորս,

Մնաւ Արե՛ա՛յն նոր, Փրկի՛չը աշխարհի:

Աւետարանները սուրբ կոյս Մարիամը կը կոչեն. *«Յիսուսի մայրը»*, իսկ եղիսաբէթ՝ Յովհաննէս Ակրտիչին մայրը, սուրբ կոյս Մարիամը կոչեց. *«Տիրոջս մայրը»*:

Մարիամի դրական պատասխանը, իր տուած հաւանութիւնը՝ ըլլալու մայր "Բարձրեալի Որդի"-ին ամենահամոզիչ ու շօշափելի օրինակն է մարդկութեան տրուած ***ազատ կամֆին:*** Մարիամի

«Այո»ն, հաւանութիւն մը, որ սրուեցաւ կատարեալ հաւատքով առ Աստուած: Մարդկային սուրբ էակ մը (Մարիամ) համագործակցելով Աստուծոյ հետ, յախտենական փրկութեան ճամբան բացաւ համայն մարդկութեան:

Սուրբ Մարիամ ընդառաջելով Աստուծոյ կոչման, կառչած մնաց իր երկնաստուր կոչումին ու հաւատքին: Կոչում ունենալ ի ծնէ, մեր էութեան մէջ, Աստուծոյ շնորհին է: Մարդ՝ Աստուծոյ լծակցութեամբ կրնայ իր կոչումը իրագործել այս աշխարհի վրայ: Բազմաթիւ մարդ էակներ ջեղած են իրենց կոչումէն, գաղափարականը զոհելով առարկայականին ու ժամանակաւորին: Ոչ մէկ արգելք կամ խոչընդոտ կրցաւ կասեցնել սուրբ Կոյսին երթը, ջեղել զինք իր կոչումէն ու տեսիլքէն:

Համեստ հարցում մը միայն: Ո՞րք է չայ եկեղեցին, որքանո՞վ տէր՝ իր կոչումին ու առաքելութեան այսօր: Եկեղեցոյ մեծագոյն կոչումը սիրոյ գործունէութիւնն է՝ սպասաւորութիւն և ծառայութիւն: Գաղափարի մը նուիրումը անհատը կամ գործիչը պէտք է ունենայ իր հոգիի պայծառակերպութեան պահերը, անդրադառնալու համար իր հոգւոյն էութեան, ու գիտակցելու համար իր ձգտումներուն ու առաքելութեան:

Կոչումը, նպատակն է ներքին, հոգեւոր վերածնութեան, "նոր արարած" դառնալու իրողութեան: Կոչումը արտայայտիչն է հոգեւոր պաշտօնեայի հաւատքին, համոզումներուն, նուիրումին և ծառայութեան: Մարդու հոգեւոր կոչումը իջիսե՛լ է նիւթի և մարմնականի վրայ: Զահանայական կոչումը և ասպարէզի ծառայութեան ոգին կը ստացուի ամենակալ Հա՛յր Աստուծմէ: Էփիֆթէթուս Epictetus իմաստասէր, ապրած է առաջին դարուն: Ան կ'ուսուցանէր թէ բոլոր մարդկութիւնը Աստուծոյ զաւակներն են, որովհետեւ անոնք կը կրեն աստուածային մասնիկը, որ կ'երբայրացնէ զիրենք: Ան կը ջեջտէր թէ Բարոզչութիւնը *ոչ ասպարէզ է և ոչ պաշտօն*, այլ՝ *աստուածայի՛ն կոչում*: Հոգեկան իրերու մէջ կոչումն է որ կ'առաջնորդէ և շնորհին է որ կը զարգացնէ կամեցողը: Կոչումն՝վ ապրումը հաւատքն է, որուն համար մարդ Բաջութիւնը կ'ունենայ հազար անգամ մեռնելու: Իր կոչումին դէմ դաւաճանող անհատն ալ, ազգն ալ չարաչար կը կորսուին:

Աստուածածին Մարդեղեալ Մանուկը՝ Իր կենարար ներկայութեամբ, գարուն պիտի բերէ, երբայրութիւն պիտի բերէ մարդկային անապատ երաշտութեան: Մարդեղեալ Մանուկ Յիսուս պիտի բանայ զոհողութեան գերագոյն ճամբան, արիւնի ու Գող-

գոթայի անձնուրացութեան ուղիով: Մարդեղեալ Բան Աստուծոյ հանդիպող անձ մը պիտի ստանայ նոր բնութիւն և նոր անուն: Միմոն՝ Յովնանի որդին պիտի կոչուի՝ «Պետրոս» "Նոր ծնունդ" մը: Զրիստոսի Մարդեղութեամբ (Անոր մարմնաւոր շրջանին՝ կրած մարդկային նեղութեան փորձառութեամբ), Յիսուս մարդկային դիւրաբեկութիւնը ներկայացուց Աստուծոյ: Որովհետեւ.

«Աստուած էր որ Զրիստոսով աշխարհը հաջտեցուց իրեն հետ և հաջուի չառաւ անոնց (մարդոց) մեղքը»:

Յիսուսի զոհաբերումը ոչ թէ միայն Գողգոթայի խաչելութիւնն էր, այլ Անոր ամբողջակա՛ն *ապրումը* երկրի վրայ դարձաւ մարդոց *հաջտութեա՛ն* զոհագործումը--Բ. Կորնթ. Ե. 18-19:

Սուրբ կոյս Մարիամ այսօր ունի չափազանց նախանձելի աստիճան հաւատացեալներու հոգիներուն մէջ, սակայն մինչեւ Յիսուսի հրաշափառ Յարութիւնը, Յիրամայրը ենթարկուեցաւ կասկածանքի և անվստահութեան իր բարեկամներու և ծանօթներու կողմէ: Միակ անձը որ վստահած էր իրեն ու գիտէր անոր յղութեան ճշմարտութիւնը, զինք սիրող սուրբ Յովսէփ ամուսինը եղաւ: Վերոյիջեալ խորհրդածութեանս պատճառը հետեւեալ համարն է որ կը գտնուի Ղուկասու Աետարանին Գլուխ Բ.51-րդ համարին մէջ.

«Անոր մայրը այս բոլոր բաները կը պահէր իր սրտին մէջ»:

Կնոջ մը սիրտը անեզր է և անհուն, անյատակ է ու անչափելի: Ի՛նչ զրպարտութիւններու ենթարկուեցաւ հե՛ք սուրբ Մարիամ իր բոլոր կեանքի ընթացքին, ոչ թէ իր հակառակորդներէն, այլ իր մտերիմներէն ալ: Մանաւանդ այն մրցակիցներէն, որոնք աչք ունէին Յովսէփի նման կրօնասէր երիտասարդի մը: Հերոսուհի՛ մըն էր Մարիամ որ կրցաւ հանդուրժել անտեղի բամբասանքներն ու չարախօսութիւնները որոնք տեղի կ'ունենային դրացիներուն կողմէ իր մասին: Թէեւ դժուար երեւցաւ, սկիզբը, իրեն փախչիլ Եգիպտոս, սակայն այդ պանդխտութիւնը դարձաւ տեսակ մը հոգեկան և ընկերային կազդոյր:

Այսօր ալ նմանօրինակ նախատիւնքի և անհասկացողութեան կ'ենթարկուին բոլոր Յիսուսանման ծառայողները: Անոնք որոնք ուխտած են դառնալ հետեւորդները Յիսուս Զրիստոսի: Միթէ նոյ-

նանման նախատինքի ու չարախօսութեան չենթարկուեցա՞ւ Գրիգոր Պահլաւունին եւս: Խեղճ Գրիգոր 13 տարի, իր վարդաբոյր տարիները ապրեցաւ Խոր Վիրապի անհրապոյր ու վտանգաւոր հորին մէջ: *«Բոլոր անոնք՝ որ կ'ուզեն աստուածապաշտութեամբ ապրիլ ի Յիսուս Բրիստոս, հալածանքներու մէջ պիտի ըլլան»* կ'ըսէ Պօղոս առաքեալ Բ. Տիմ. 4. 12-րդ համարին մէջ:

Կ'ուզե՞ս ըլլալ հերոս: Բրիստոնեայ հերոսութիւնը, երթալ է գայլերու մէջ *«որպէս գառնուկներ»*, առանց գէնքի, նիզակի և սուրի: Միակ պաշտպանութիւնը համբերութեան և սպասումի **վահա՛նն է**:

Գարրիէլ Հրեշտակը պատուիրեց սուրբ կոյս Մարիամին, որ երբ Մանուկը ծնի, Չայն անուանէ "ՅԻՍՈՒՄ": Յիսուս անունը երբայեցեղէն կը նշանակէ **"ՓՐԿԻԶ"**: Ոչ ոք երբեք կրեց այս անունը այնպէս իրաւի և արժանի նշանակութեամբ, ինչպէս Յիսուս Բրիստոս:

Համայն աշխարհ կը տօնէ Յիսուսի Ա. Ծնունդը՝ Մարդեղութիւնը, Անոր ծննդեան օրը ու այնուհետեւ Յիսուս կը մոռցուի:

Ինչո՞ւ Յիսուսի Ծնունդէն յետոյ Անոր առաքելութիւնը, հրաշագործութիւնները, Բարոգութիւնները և սգաւորներ մխիթարելը այնքան չեն յիշուիր շուկաներու մէջ, որքան **Կաղանդ Պապայի օրը**: Առեւտուրի սպառողակա՛ն և դրամատիրակա՛ն աստուածները կարիքը չունին սփռելու ու տարածելու Յիսուսի առաքելութիւնն ու փրկչական պատուիրակութիւնը: Աշխարհի դրամատերերը ծարաւի՛ են միա՛յն բազամացնելու իրենց նիւթակա՛ն հարստութիւնը:

Մարդիկ կ'աշխատին տէր ըլլալ կալուածներու, տուներու, հարստութեան, կը ջանան իրարու հետ մրցիլ աւելի ընդարձակ առեւտրական մարզերու տիրել: Պետութիւնները կը տհմին, կը կրուպին իրարու դէմ, իրարու ձեռքէն յափշտակելու համար երկիրներ ու քաղաքներ, հանքեր ու հողեր: Անկուշտ կիրքը իջիւնելու և տիրապետելու փառամոլութիւնը ոչ չափ ունի ու ոչ սահման: Մարդուն ազահութիւնը կը փախէ մինչեւ գերեզման, ո՛չ մասնաչափ մը աւելի:

Մարդաշխարհ կը տօնէ Յիսուսի Ծնունդը միայն, որովհետեւ այս աշխարհի պետութիւնները սորված են ոչխարամիտ դարձնել իրենց քաղաքացիները: Այս աշխարհի գօրաւորները կը փափաքին ու կը ջանան ներկայացնել Յիսուս Բրիստոս միայն որպէս **Մատնէկ** մը, անգօր, քնատ ու թմրած: Չեն ուզեր տեսնել Պայծառակերպեալ Աստուածնորդին, չեն ուզեր ցոյց տալ Չայն որպէս Բժիշկ մարմնի և հոգիի: Չեն ուզեր հրապարակել Անոր գերբնական սաստը որ հանդարտեցուց Գալիլիոյ ծովուն հովերն ու փոթորիկները: Չեն

ուզեր ցոյց տալ բժշկուող դիւահարը, որպէսզի չկորսնցնեն իրենց հովուած խոզերը: Ձեն ուզեր պատմել Ղազարոսի և ուրիշ մեռելներու յարութիւնը, որպէսզի մարդիկ ըլլան նիւթապաշտ, ժամանակաւոր և անգէտ:

Մարդկութիւնը միշտ ջիւղած է միջոցը նպատակէն: Իմաստութիւնը կը պահանջէ գիտնալ, թէ մեր Տիրոջ Յիսուսի Ա. Ծնունդը միջոց մըն էր ու ո՛չ նպատակ: Եթէ մամոնան նպատակ դառնայ, և պաշտամունքի առարկայ, այդ ուրացութիւն է Աստուծոյ: Ֆիզիքական պահանջներու գոհացումը պէտք է նկատուի կեանքը պահպանելու *միջոցը* և ոչ անոր *նպատակը*: Մարդկային կեանքը առանց անմահութեան՝ անիմաստ ու աննպատակ գոյութիւն մըն է: Մարդու գոյութիւնը և պատմութիւնը պատահական և աննպատակ իրողութիւններ չեն: Տիեզերքը կոյր փոթորկումներու ակնթարթի մը գոյացութիւնը չէ: Կեանքը՝ նպատակ մը հետապնդել է, պայքար մըն է կատարելութեան հասնելու:

Յիսուսի Ա. Ծնունդն ու Մարդեղութիւնը, վերոյիջեալ կատարելութեան առաքելութիւնը, և իրողութիւնը պատմել ու հրապարակել եղաւ, հոգ չէ որ այդ երկնային իրագործադրութեան ընթացքին Ան սպաննուեցաւ: Յիսուս թէ՛ մեռելներէն Յարութիւն առաւ, և թէ՛ յարութիւն տուաւ Իր հաւատարիմ աջակերտներուն: Յիսուս դաստիարակեց ու փոխակերպեց առաքեալները, որպէս կենդանի հերոսներ: Ան Իր սրբութեան ոգեշնչեց առաքեալները և պարզ ձկնորսները դարձան աստուածաբարբառ: Փոխանակ աճիւն մը ըլլալու Իր աջակերտներուն սրտին մէջ, Յիսուս Զրիստոս դարձաւ ծունչ ու Ոգի:

Յիսուս ամպածրար բարձունքներու վրայ չտուաւ իր պատգամները, Մինային կայծակներն ու Եդիպի վրէժխնդիր սուրը չեղան Իր գէնները, այլ հեզութիւնը, բարութիւնը, սրբութիւնը, արդարութիւնը, գոհաբերութեան ոգին, որոնցմով ապրեցաւ, զորս քարոզեց և նըւիրագործեց Իր Խաչովը: Յիսուս դարձաւ աստուածային նկարագրին գերազանց պատկերն ու խտացումը: Իր անձնագոհ ապրումով դիւրահասկնալի դարձուց չօր տեսլականը համայն մարդկութեան: Խաչեցեալին Արիւնը, հոսելով խաչն ի վար, տարածուեցաւ երկրի վրայ և ուրուագծեց Ա. Եկեղեցիին ընթացքը և ուղին:

Յիսուս Զրիստոսի կարեկից խօսքերը, Իր Աջին հպումը, Իր նայուածքի սեւեռումին ազդրութիւնը և մանաւանդ արդարութիւն և իրաւունք պահանջող Իր խօսքերը հոգեպէս բժշկեցին Մարիամ Մազթաղենացին, Զակեոս մաքսապետը և մեղքի մէջ բռնուած

թշուառ կինը: Յիսուս ներողամիտ գտնուեցաւ մեղաւորներուն հանդէպ, որովհետեւ մարդկային ողբերգութեան սրաման ապրեցաւ: Ի՛նք ալ ջաղախեց Ինճզիմք ժողովուրդին հետ: Յիսուս՝ մարդկութեան հոգին, Իր Հոգիին մէջ փոխադրելով, կենդանի հաղորդութեամբ միջնորդեց մարդկային դիւրաբեկութիւնը առ Հայր Աստուած, ու դարձաւ միակ Միջնորդն ու Բարեխօսը մեզի համար:

Ամերիկայի Արեւմտեան Նահանգներու մէջ գոյութիւն ունի "Յիսուս Մեմինար" կոչուած յաւակնոտ կազմակերպութիւն մը, որ մերկացուցած է Յիսուս Բրիստոսը Իր անգուգական հասկացողութենէն, Իր ԱստուածՈրդիութենէն, Իր հրաշագործութենէն, մահէն ու Յարութենէն: Համեստ հարցում մը սոյն մեծամիտ "աստուածաբան"ներուն: Ինչպէ՞ս այս սնանկ կարծուած Անձնաւորութիւնը (Յիսուս) կրցաւ յեղաշրջել Հոռոմէական կայսրութիւնը ու հեթանոս քաղաքակրթութիւնը:

«Յիսուս՝ Աստուծոյ մարմնացեալ Ներկայութիւնն էր երկրի վրայ» մարդկային ըմբռնողութեան համար, և ջօշափելի ճշմարտութիւնը իմաստասէրներէ այնքան յամառօրէն փնտռուած: Նախանձորդներ մեռցուցին Յիսուսը, սակայն չկրցան ջնջել Անոր Ոգին: Խաղաղութեան Իշխան Յիսուս, անխօս ու անջշուկ՝ Իր կապեալ վիճակին մէջ իսկ հաշտեցուց երկու աշխարհիկ իշխաններ՝ Պիղատոսը և Հերովդէսը: Յիսուս կրեց չարչարանքն անմրմունջ հեզութեամբ և առանց որեւէ դիմադարձութեան: Ան լացաւ, ոչ թէ ցաւէն, այլ *վիշտէն*:

Յիսուսի մէջ աղփատութեան սէրը ճգնաւորական ցուցամոլութեան ամբարտաւան զգեստ մը չէր, այլ աղփատներուն և զրկեալներուն ցաւն ու վիշտը զգալն էր: Յիսուս ամենէն աւելի կը սիրէր, այն աղփատները, որոնք Արեւմտեան սիրոյն համար աղփատ եղան, ոչ թէ իրենց ծուլութեան հետեւանքով աղփատ էին:

Բրիստոնէութեան կեդրոնը, առանցքը Յիսուս Բրիստոսի **Ա՛նձն** է: Բրիստոնէութեան հիմնական տարբերութիւնը ուրիշ կրօններէ և հրէութենէ, անոր հիմնուած ըլլալն է Յիսուս Բրիստոսի **Անձի՛ն** վրայ և ո՛չ գիրքի մը: "Պատմական Յիսուս"ի ակնադրքիւրը չորս Աւետարաններն են: Հրեայ մարգարէներուն պատգամը կը սկսէր. «*Տէր Աստուած* այսպէս կ'ըսէ»-ով, իսկ Յիսուս Բրիստոս պատգամեց, ըսելով. «*Ե՛ն կ'ըսեմ ձեզի*»: Յիսուս «Եղա՛ւ», ապրեցա՛ւ, գործեց: Գիրք մը չտուաւ մարդկութեան, այլ **Ինճզի՛մք** տուաւ: Յիսուս Բրիստոս կ'ապրի մարդու հոգւոյն մէջ արգելք ըլլալու համար, որ մարդ մեղանչէ: Յիսուս Բրիստոս մեր

մարդկային կեանքին մէջ տարրացած սիրոյ էութիւնը դառնալու է:

Առա՛նց զէնքի՝
Մարտնչեցաւ պատերազմներ
Գեհե՛նաբորբ
Ու շահեցաւ
Յաղթանակներ երկնահամբաւ՝
Առա՛նց զօրքի:

--ժազ Ս. Յակոբեան

Յիսուս Զրիստոս մեզի համար վախճանած սուրբի մը պատկերը չէ, նահատակ հերոսի մը յուշակոթողը չէ և ոչ ալ հանճարեղ գիտնականի մը հոյակերտ արձանը, այլ՝ Աստուծոյ մարմնացած ու մարդացած Որդին է: Յիսուս Իր Ս. Խաչելութեամբ ո՛չ թէ Իր Անձը կը յանձնէ կամ կը մատնէ մահկանացութեան, այլ՝ Իր պատգամած ու յայտնած Աստուծոյ սերն ու ճշմարտութիւնը վկայելու պայքարամարտին մէջ կը սպաննուի: Այս արարքը ցոյց կու տայ Իր հաւատարմութիւնը աստուածային առաքելութեան: Մեր հայեացքը երբ կեդրոնացնենք Զրիստոսի վրայ, հոն չենք հանդիպիր "մեղմ ու փափկասուն Յիսուսի", այլ հզօր Անձնաւորութեան մը, որ կը ցնցէ՝ ու կը թօթուէ մեզ որպէսզի մեր էութենէն արտաքին սխալ կարծիքները՝ մեր չաստուածները՝ (իմ նպատակներո՛ւս աստուածը, իմ ըմբռնումի՛ս աստուածը, իմ փորձառութեա՛նս աստուածը, իմ հանգիստի՛ս աստուածը, իմ յաջողութեա՛նս աստուածը, և ի՛մ ազգիս աստուածը):

Զրիստոսի աստուածայայտ այս նո՛ր Դիմագիծը, Աւետարանը կ'անուանէ **"ՍՈՒՐԲ"** վերադիրով, որովհետեւ Ան մե՛ր աստուածներուն՝ մեր բմահաճոյքին ստեղծած կուռքերուն չի՛ նմանիր: Եբրայեցւոց մէջ, ինչպէս Արեւելի ուրիշ ժողովուրդներու մօտ, անձի մը անունը կը նոյնանայ անձին հետ և նոյնինքն անձը կը նշանակէ, մանաւանդ երբ Աստուծոյ կամ Զրիստոսի անունին կը վերաբերի: Հաւատացեալներս զԱստուած՝ Յիսուսի՛ ապրումին մէջ կը տեսնենք, Անո՛ր մէջէն կը դիտենք, Անո՛ր միջոցով կը ճանչնանք, ու ո՛չ մեր կարծիքներով:

Յիսուս Զրիստոս սուկ աննման Մա՛րդ մը չէ՛, ոչ ալ Յիսուս նազովրեցի՛ն, ամենէն կատարեա՛լ էակն է:

1. Վերոյիջեալ անձնաւորութիւնը կրնայ ըլլալ փիլիսոփայի՛ն

վեհ անձը:

2. Սուկրատ նշմարել սուլաւ՝ հոգիին մատչելի լուսաւոր բարձունքները, ջրջեց բարոյականն ու օրէնքները իր ժամանակին:
3. Մովսէս դատապարտեց մեղքը և յանցնաւ:
4. Պուտտա զանազանեց չարն ու բարին. բայց թէ՛ Սուկրատի, թէ՛ Մովսէսի և թէ՛ Պուտտայի կը պակսի *բացարձակ* ոգեկանութիւնը, որով համակուած է Խօսքը Յիսուսի, որ **գո՛րծ** է միանգամայն:
5. Մարդոց երեւակայութենէն յառաջ եկած դիմերն ու չաստւածները խամաճիկներ են՝ բաղդատմամբ Յիսուսի:

**Յիսուս է աննման և աննախընթաց Մարդը,
Կատարեալ Էակը, ԱստուածՈրդի՛ն է:**

Հունաւոր բանականութեամբ չենք կրնար բացատրել Բացարձակը ու սահմանաւոր կամեցողութեամբ չենք կրնար վճռել Կատարեալը: Ան, որ կ'ուզէ նկարագրել Բարին, պէտք է Ջայն կրած ըլլայ իր հոգիին մէջ: Սուրբերն ու նահատակները թաղուեցան Բարերուն տակ, բայց ջահին բոցը վառ մնաց Բարերուն վրայ Յիսուսատիպ խաչաբարերով:

Յիսուսի Ծնունդը նուէր մը եղաւ մարդկութեան:

1. Մեր զբաղ կեանքին մէջ **ի՛նչ դիւրին է անտեսել Աստուծոյ օրհնութիւնները, պանդոկապետին նման որ ճամբեց Յովսէփն ու կոյս Մարիամ երբ ան պիտի ծնէր աշխարհի Փրկիչը՝ Մարդեղեալ Յիսուս:**
2. Մինչ կը տօնենք **Նոր Տարին ու Ս. Ծնունդը, փնտռենք ճշմարիտ Լոյսը:**

Յիսուսո՛վ ապրինք և Ջինք մեր մէջ ապրեցնե՛նք:

**Դեկտեմբեր 23, 1997
Թորոնթօ**

ԾՈՒՆԿԻ ՎՐԱՅ

Ի՞նչ եմ, Տէ՛ր իմ, աչփիդ դիմաց՝

- Թէ ոչ հիւլէ մ'անհուներորդ,

Այսչափ մարդոց բով ի՞նչ եմ ես՝

- Թէ ոչ հազիւ ջո՛ւբ մը ճամբորդ:

Ի՞նչ է անունս երկրի վըրայ՝

- Թէ ոչ հազիւ երա՛գ մ'անցորդ.

Ժամանակին մէջ կեանքս ի՞նչ է՝

- Թէ ոչ բոպէ մ'անհուներորդ:

Բայց մտածե՛լ, թէ դո՛ւն՝ Աստուած՝

կը մտածե՛ս միջո իմ վըրաս,

Բոլոր օրերս ալ կը հոգա՛ս...

Ըսե՛լ, թէ զիս կը սիրե՛ս ալ.

Զի ընելու զիս բու որդին

Եւ ժառանգորդ փառփի՛դ անգին՝

Ոչնչութեա՛նս համար մեռար...

--ժագ Ա. Յակոբեան